

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆԱՄԱԿԸ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Անթիլիաս

Ձերդ Սրբութիւն,

Անցեալ Յուլիս ամսուն սիրով ողջունեցինք Մայր Աթոռ ժամանումը Ձեր ներկայացուցիչներուն՝ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոսի, Տ. Արամ եպիսկոպոսի և Տիար Ոսկեբերան Արզումանեանի, որոնք Մեզի բերին Ձեր Աթոռի տեսակէտը՝ թէ մեր Եկեղեցին կպմական կանոնադրութեամբ մը օժտելու գաղափարը ցանկալի չէ և ոչ ալ գործադրելի:

Սեպտեմբեր ամսուան մէջ Մայր Աթոռիս Գերագոյն Հոգևոր Խորհուրդը ընդլայնուած նիստի մը մէջ, որուն մասնակցեցան Կանոնադրութեան Յանձնաժողովի անդամները, ներքին թեմերի և արտասահմանէն ժամանած եպիսկոպոսները, բոլորով՝ 16 արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ, քննարկեցին Ձեր ներկայացուցիչներու բանաձևած տեսակէտները և կարծիքներու լայն փոխանակումէն յետոյ եկան միահամուռ այն եզրակացութեան թէ Կանոնադրութեան Յանձնաժողովը պէտք է շարունակէ իր սկսած աշխատանքը վերջնական ձևի մէջ դնելու համար նախագիծը: Առ այդ, Մայր Աթոռիս Դիվանը այդ մասին հրապարակեց իր 29 Սեպտեմբեր 1986 թուակիր Ձեզի ծանօթ «Յայտարարութիւն»-ը:

Մենք իրապէս կը ցաւինք Աթոռիդ ժխտական այս վերաբերումին համար: Կը սպասէինք որ չմերժէիք Յանձնախումբին հետ աշխատիլ, որով գործակցութեան ոգիի ապացոյց մը տրուած պիտի ըլլար Աթոռիդ կողմէ:

Արդ, Մենք խղճի պարտք նկատեցինք ընթացք տալ Մայր Աթոռիս եպիսկոպոսաց դասի և Գերագոյն Հոգևոր Խորհուրդի որոշման և Յանձնաժողովին յանձնարարեցինք որ իր աշխատանքը շարունակէ յառաջիկայ տարի, այն յոյսով, որ Կանոնադրութեան նախագիծը պիտի կարողանայ ստանալ իր վերջնական շարադրանքը իբրև նախագիծ:

Այս առթիւ կը փափաքինք Մեր կարմանքը յայտնել թէ Կանոնադրութեան հարցի առնչութեամբ ինչքան անհիշտ ու անարդար խմբագրականներ և յօդուածներ լոյս տեսած են անցեալ Յուլիս-Օգոստոս ամիսներու ընթացքին կուսակցական որոշ թերթերու մէջ («Հայրենիք») և Սեպտեմբերին՝ «Դրօշակ» պաշտօնաթերթին մէջ: Մեկի կարմանք պատճառեց մանաւանդ ա՛յն որ յստակ կերպով նկատելի էր թէ այդ գրութեանց հեղինակներուն ծանօթ եղած են Կանոնադրութեան վերաբերեալ վերջին երկու տարիներու շրջանին մեր թղթակցութիւնները, որոնք հրապարակուած չէին և ոչ ալ հրապարակելի: Այս կացութեան առջև, Մենք անհրաժեշտ գտանք ու հրահանգեցինք որ «Էջմիածին» մեր պաշտօնաթերթը հրապարակէ մեր փոխանակած նամակները Կանոնադրութեան հարցի վերաբերեալ, ի լուսաբանում մեր եկեղեցական կեդրոններուն և հաւատացեալ ժողովուրդին:

Մենք միշտ պիտի մնանք հաստատ այն մտածումին վրայ որ ուշ թէ կանուխ պէտք է կարողանանք մեր Եկեղեցին օժտել կպմական Կանոնադրութեամբ մը և վայն կեանքի կոչել, այդ նկատելով ապահով գրաւական մը՝ իրագործելու համար նաև կանոնական միութիւնը մեր Եկեղեցւոյ և հոգեշէն գործակցութիւնը մեր նուիրապետական Աթոռներու միջև:

Փրկչի Իշման հայրենի սուրբ հողին վրայ կանգնած մեր վերածնած ժողովուրդի ծոցին մէջ, Մենք միշտ պիտի մնանք լաւատես, համոզուած ըլլալով որ նաև Սփիւռքի մեր պանդուխտ կաւակները, անկախ այլ և այլ անցողական կացութիւններէ և օտար ազդեցութիւններէ, պիտի մնան աներեր հաւատարիմ կաւակները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, անփոխարինելի հիմքը մեր քրիստոնէական հաւատքին և ազգային-եկեղեցական կառոյցին:

Նոյն լաւատես ոգիով կը հաւատանք թէ Ձեր պատմական Աթոռը ի վերջոյ պիտի գտնէ ուղիղ ճանապարհը իր պատմական տեղը պահպանելու մեր մայր Եկեղեցւոյ կառոյցին մէջ, կանոնական միութեան և եղբայրական գործակցութեան պայմաններու ներքև:

Ձեզմէ միշտ բարի լուրեր սպասող, կը մնանք բարի մաղթանքներով և եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԷՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
27 Հոկտեմբեր 1986 թ.

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ